Նախ զսիրեցեալն Աստուծոյ, զբաւականն ձեռամբ,* որպէս ասացաւ Բեդղահեմացի. և զԵղիա Թեգրացի, զԵղիսէոս Դելմելացի, զՄիքիաս Մոլըստացի, և զՆաւում Նիկեսացի. Սամուէլ Ցարեմացի, Երեմիաս Անաթովթացի, և կարծեալ սիւնքն Սիոնի՝ Բեդսաիդացի. և ինքն Աստուածն և Տէրն կոչէր Նազարացի: Այսպէս և Մաշտոց երանելի ծնեալ ի Հացիս՝ ի բարւոք և ի հաւատացեալ ծնողաց, և զարգացեալ հասակաւ վարժէր կրթութեամբ դպրոց՝ պարսից յունաց և ասորոց[1] տառիւքն: Եւ սակաւ ինչ հմտացեալ [Թղ. 11 ա] յիւրում նահանգին. և ապա հրաժարեալ անտի և բարեաւ մնալ ասացեալ ամենայն կենցաղական հոգւոց. և ընթացեալ տարաղէմ. և ստանալով զարհեստ արհեստաւորաց՝ և զիմաստս իմաստնոց. և բովանդակեալ վեց մասամբ զբոլորն իմաստս, այլ և զմերս իսկ. և փարթամացեալ համայնիւ աստուածայնով և ներշրջականաւ:

---

*. Լուս. «զԴաւիթ»:

զֆոռւ թագաւորին . . . անուանն կանանց նոցա, անուն կնոջն Պապայ՝ Վարազդուխտ . . . անուն կնոջն Արանագինի Բամբիշն, ի սոցանէ ծնաւ այս սքանչելի եւ զարմանալի Ներսէս . . .» Իսկ Խորենացին ոչինչ չի յիշում:

1. Կորիւնը եւ Փարպ. յիշում են, որ Մեսրոպը վարժ էր միայն յոյն դպրութեան մէջ. «ի մանկութեան դիւն վարժեալ հելլենական դպրութեամբ»: